

Medi-Cal-ի Խարդախութիւն եւ Չարաշահում

IHSS-ի Հրատապ գիծ
Էլ- հասցէ՝
Կայքէջ՝

1-888-717-8302
IBREF@dhcs.ca.gov
www.dhcs.ca.gov

Առողջապահութեան Խնամքի Ծառայութիւններու Բաժանմունքը (Department of Health Care Services, DHCS) որեւէ մէկէ, որ կը նկատէ կամ տեղեկութիւն կ'ունենայ բժշկական կասկածելի խնամքի վերաբերեալ որեւէ գործունէութեան մասին, կը խնդրէ տեղեկութիւն տալու համար հեռաձայնել IHSS Medi-Cal Խարդախութեան Հրատապ Գիծին՝ **1-888-717-8302**: Չայնագրուած հաղորդագրութիւնը կը հնչէ անգլերէն եւ չորս տարբեր լեզուներով՝ սպաներէն, վիէթնամերէն, քամպուտերէն եւ ռուսերէն: Հեռաձայնելը ձրի է, եւ հեռաձայնողը անյայտ կը մնայ: Դուք կրնաք նոյնպէս էլեքթրոնային հասցեով գրել մեզի **IBREF@dhcs.ca.gov** կամ ինթերնետով կապուիլ մեր բողոքի ձեւը լեցնել **<http://apps.dhcs.ca.gov/AutoForm2/default.aspx?af=1828>** կայքէջի վրայ:

Medi-Cal-ի խարդախութիւնը կարգ մը խնամատարներու կողմէն, շատ պարագաներու ալ նպաստընկալներու, դիտումսաւոր փորձ մըն է չարտօնուած վճարումներ կամ օգուտներ ստանալու Medi-Cal-ի որեւէ մէկ ծրագիրէ, ներառեալ նաեւ Տնային Օժանդակութեան Ծառայութիւններու (In-Home Supportive Services, IHSS) Ծրագիրէն: Այս խարդախութիւնը կրնայ շատ ձեւեր առնել, որոնցմէ ամենատարածուածը IHSS Ծրագիրին մէջ կը կապուի խնամատարներուն կողմէն ոչ պիտանի կամ չկատարուած ծառայութիւններու դիմաց դիտումսաւոր հաշիւ ներկայացնելուն:

